

Հաստատվել է

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Տնօրինության

_____թ. N ____ որոշմամբ

**ՄՈՒԲԱՅԼ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ
ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ/Բանկ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0002, Մոսկովյան փող. 35, ոչ բնակելի տարածքներ 68-73

Հեռ.՝ 87-87, (+374 8000) 87-87 (արտասահմանյան զանգերի համար)

Էլեկտրոնային հասցե. headoffice@vtb.am

Բանկի պաշտոնական կայքը՝ www.vtb.am

Սույն «Մոբայլ հավելվածներով վճարումների համակարգում բանկային քարտերի օգտագործման պայմանները և կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են սույն Կանոններում ներառված ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդներին (այսուհետ՝ Հաճախորդ) Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր պայմանները, դրանցից օգտվելու կանոնները, նկարագրում են մոբայլ հավելվածներով Բանկի թվային քարտերի օգտագործման կանոնները և պայմանները վճարումների համակարգում, Հաճախորդների և Բանկի իրավունքները և պարտականությունները, փոխադարձ պարտավորությունների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները: Կանոնները սահմանում են համակարգ մուտք գործելու և Հաճախորդի թվային քարտի օգտագործման կարգը միայն Բանկի և Հաճախորդի միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում: Բջջային կապի օպերատորը, սերվիս-պրովայդերը և սպասարկում տրամադրող այլ կողմերը (այդ թվում վեբ կայքերը), որոնք ինտեգրված են վճարային սպասարկման համակարգում, լիազորված են սահմանել իրենց կանոնները և դրույթները (այդ թվում սերվիս-պրովայդերի կանոնները և պայմանները) և գաղտնիության քաղաքականությունը:

Սույն Կանոնները հանդիսանում են Բանկի ներքին իրավական ակտ, որը միաժամանակ հանդիսանում է Բանկի կողմից պայմանագիր կնքելու (այսուհետ՝ Պայմանագիր) հրապարակային առաջարկություն (օֆերտա) Բանկի կողմից տրամադրվող (սույն Կանոնների շրջանակներում) և Հաճախորդի կողմից նախընտրած ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մասով:

Եթե սույն Կանոններով սահմանված դրույթները տարբերվում են Պայմանագրով նախատեսված հստակ ծառայության պայմաններից, ապա կիրառվում են սույն պայմանագրի դրույթները:

Հաճախորդների անձնական տվյալների մշակմանը վերաբերող բոլոր հարցերը՝ հաշիվների/քարտերի/ավանդների բացման, վարկերի ձևակերպման, դրանց սպասարկման, Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերի լուծման և վերը նշված գործարքների հետ կապված և սույն Կանոններով չկարգավորված այլ հարցերի հետ, կարգավորվում են Բանկի Տնօրինության 07.08.2020թ. N237 որոշմամբ հաստատված ««ՎՏԲ –Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց ծառայությունների մատուցման պայմաններով և կանոններով» [/https://www.vtb.am/img/content/payments-and-accounts/pdf//Prilojenie_OFERTA.pdf/](https://www.vtb.am/img/content/payments-and-accounts/pdf//Prilojenie_OFERTA.pdf), ինչպես նաև MIR քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններով <https://www.vtb.am/am/card/mir-classic/>, <https://www.vtb.am/am/card/zarplatnye-mir-karty>.

1. Հասկացություններ

Սույն Կանոնների նպատակների համար ստորև բերված եզրույթները ունեն հետևյալ նշանակությունը.

1.1. **Վավերացման տվյալներ՝** Հաճախորդի գաղտնաբառը, որն անհրաժեշտ է մոբայլ հավելվածում նույնականացման համար (այդ թվում Հաճախորդի կենսաչափական տվյալները (մատնահետքերը, դեմքի պատկերը և այլն), սպասարկման պրովայդերի կողմից նախատեսված կանոնների համաձայն, PIN-ծածկագիրը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք օգտագործվում են Համակարգ մուտք գործելու համար,

1.2. **Անհայում վճարում՝** անհայում ընթերցող սարքը և թվային քարտի միջոցով իրականացվող վճարում,

1.3. **Ինտեգրված գնումներ՝** վեբ-կայքում կամ սեփական հավելվածում համակարգի օգնությամբ սպասարկում ներկայացնող վաճառողների մոտ ինտեգրված հավելվածի միջոցով կատարված գնումներ,

1.4. **Ավտորիզացիա մատնահետքերի միջոցով՝** մատնահետքերի ճանաչման ֆունկցիա համակարգում տարբեր գործողությունների, այդ թվում վճարային գործառնությունների հաստատման համար: Նշված ֆունկցիան կարող է ակտիվացվել, փոփոխվել կամ անջատվել մոբայլ սարքին հասանելի ծածկագրի օգնությամբ:

1.5. **Մոբայլ հավելված՝** ծրագրային ապահովում, որը թույլ է տալիս Հաճախորդին իրականացնել անհայում վճարումներ և ինտեգրված գնումներ,

1.6. **Անլար կապի օպերատոր՝** Հաճախորդին ծառայության մատակարար, որը ապահովում է հեռախոսակապ բջջային ցանցի միջոցով՝ աջակցող սարքավորման աշխատանքի համար,

1.7. **Վճարային սպասարկում՝** սերվիս-պրովայդերների կանոններով և պայմաններով նախատեսված սպասարկում, որն ենթադրում է ապրանքների արժեքի վճարում և թվային քարտերի օգնությամբ սպասարկում,

1.8. **Աջակցող սարք**՝ էլեկտրոնային սարք (սմարթֆոն, պլանշետ և այլ սարքավորում), որը համատեղելի է սերվիս-պրովայդերների համակարգերի հետ և որի վրա տեղադրված է մոբայլ հավելվածը,

1.9. **Սերվիս-պրովայդեր**՝ մոբայլ հավելվածի հեղինակ հանդիսացող ընկերություն, որի հետ Հաճախորդը ձևակերպել է վճարային սպասարկման տրամադրման ձևակերպված պայմանագիր,

1.10. **Համակարգ**՝ ծրագրային ապահովման համալիր, որը ներառում է Հաճախորդին վճարային սպասարկումից օգտվելու հնարավորություն ընձեռող Մոբայլ հավելված: Համակարգի նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է սերվիս-պրովայդերին,

1.11. **Սերվիս-պրովայդերի կանոնները և պայմանները**՝ Հաճախորդի և սերվիս-պրովայդերի միջև կնքված լիցենզավորված պայմանագիր, սերվիս-պրովայդերի այլ կանոնները և պայմանները,

1.12. **Քարտ**՝ Բանկի վճարային քարտ,

1.13. **Թվային քարտ**՝ քարտ, որի թվային նմանակը Հաճախորդը գրանցել է Համակարգում:

2. Աշխատանքի սկզբունքները

2.1. Վճարումների կատարում

2.1.1. Համակարգը թույլ է տալիս Հաճախորդին սարքում ստեղծել Թվային քարտ, որի միջոցով Հաճախորդը կարող է իրականացնել.

2.1.1.1. Անհայում վճարումներ տերմինալի օգնությամբ առևտրի կետերում,

2.1.1.2. Մոբայլ հավելվածում ինտեգրված կամ վճարային սպասարկման համակարգին միացած վաճառողների հետ այլ թվային առևտրային հաշվարկներ,

2.1.2. Հաճախորդը աջակցող սարքում Քարտի վավերապայմանները մուտքագրելով գրանցում է Քարտը Համակարգում: Քարտի բարեհաջող վերիֆիկացումից հետո համակարգը ձևավորում է դրա թվային նմանակը:

2.1.3. Բանկը նույնականացման և վերիֆիկացման ընթացակարգի օգնությամբ, որը կարող է իրականացվել Բանկում առկա Հաճախորդի բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով, հաստատում է Քարտի պատկանելիությունը Հաճախորդին:

2.1.4. Վճարման իրականացման համար Հաճախորդը համակարգում ցանկալի Թվային քարտն ընտրելուց և առևտրի կետում գտնվող անհայում տերմինալի մոտակայքում աջակցող սարքը կամ ընթերցող սարքը տեղադրելուց հետո, հաստատում է վճարումը Վավերացման տվյալների մուտքագրման ճանապարհով:

2.1.5. Ինտեգրված գնումների իրականացման համար Հաճախորդն ընտրում է համակարգում ցանկալի Թվային քարտը և հաստատում վճարումը՝ Վավերացման տվյալները մուտքագրելով:

2.2. Տեղեկատվության և վճարումների դիտում

2.2.1. Համակարգը Հաճախորդին տրամադրում է Թվային քարտերի վերաբերյալ պաշտպանված տեղեկատվության հասանելիություն.

2.2.1.1. Քարտի կարգավիճակ,

2.2.1.2. Թվային քարտերի միջոցով իրականացված նախորդ գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն. ամսաթիվը, գումարը, վաճառողի անվանումը: Համակարգի միջոցով Թվային քարտով իրականացված գործառնությունների մասին հաղորդագրությունները անջատելու հնարավորություն է նախատեսվում:

2.2.2. Համակարգը չի կարող տրամադրել Հաճախորդին տեղեկատվություն Համակարգից դուրս իրականացված գործառնությունների մասին:

2.3. Հաճախորդի իրավունքները և պարտականությունները

2.3.1. Հաճախորդը պարտավոր է պահպանել սերվիս-պրովայդերի կանոնները և պայմանները:

2.3.2. Հաճախորդը պարտավոր է իր Վավերացման տվյալներն պահպանել երրորդ անձանց համար անհասանելի վայրում:

2.3.3. Վավերացման տվյալների և/կամ Թվային քարտի անցանկալի բացահայտման դեպքում, Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ զանգահարելով 8787 հեռախոսահամարին:

2.3.4. Եթե Հաճախորդը չի տեղեկացնում և/կամ ժամանակին չի տեղեկացնում Բանկին Վավերացման տվյալների և/կամ Թվային քարտի անցանկալի բացահայտման մասին, Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած վնասի համար:

2.3.5. Վավերացման տվյալների և/կամ Թվային քարտի օգտագործմամբ իրականացված գործառնությունները համարվում են Հաճախորդի կողմից իրականացված, անկախ այն հանգամանքից ով է իրականում իրականացրել այդ գործառնությունները:

2.3.6. Հաճախորդը սույն Կանոններով նախատեսված գործառնությունների կատարման համար իրավունք ունի օգտագործել ցանկացած Քարտ, որը բացվել է Հաճախորդի անվամբ և չի վերացվել կամ արգելափակվել:

2.3.7. Հաճախորդն իրավունք ունի օգտագործել միևնույն Քարտը տարբեր Համակարգերում և Մոբայլ հավելվածներում:

2.3.8. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել վճարային սպասարկումից՝ Համակարգից Թվային քարտը հեռացնելու ճանապարհով:

2.4. Բանկի իրավունքները և պարտականությունները

2.4.1. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Քարտի գրանցումը և Համակարգում Թվային քարտը ստեղծումը:

2.4.2. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ արգելափակել Թվային քարտը և դրա օգտագործման հնարավորությունը Համակարգում.

2.4.2.1. Հաճախորդի կողմից սույն Կանոններով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,

2.4.2.2. Թվային քարտի և/կամ Քարտի չթույլատրված օգտագործման հետ կապված կասկածների առաջացման դեպքում,

2.4.2.3. Հաճախորդի կողմից պայմանագրի պահանջները խախտելու դեպքում, ինչի հետևանքով Բանկին պատճառվել է կամ կարող է պատճառվել վնաս:

2.4.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հանդեպ պատճառված անհարմարությունների և վնասի համար սպասարկումից հրաժարվելու դեպքերում, որոնք տեղի են ունեցել ոչ Բանկի մեղքով առևտրի կամ սպասարկման կետերում POS-տերմինալի կամ բանկոմատի կամ տեխնիկական խափանման պատճառով:

2.5. Պայմանագրեր երրորդ կողմերի հետ

2.5.1. Սույն Կանոնները տարածվում են միայն Հաճախորդի կողմից Թվային քարտի օգտագործման դեպքերի վրա: Բջջային կապի օպերատորը, սերվիս-պրովայդերը և վճարային սպասարկման Համակարգում ինտեգրված այլ սպասարկող կողմերը (այդ թվում վեբ-կայքերը), ձևակերպում են իրենց պայմանագրերը Հաճախորդի հետ: Բացի այդ, Հաճախորդը նույնպես պարտավոր է կատարել երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի պայմանները՝ իր կողմից սեփական անձնական տվյալների բացահայտման, նրանց կողմից առաջարկված սպասարկումն օգտագործելու կամ համապատասխան կայքեր այցելելու ընթացքում: Բանկը պատասխանատվություն չի կրում սերվիս-պրովայդերների կամ երրորդ կողմերի պայմանագրերի թույլ կողմերի, օրինականության, պիտանելիության և այլ տեսակետների, կամ պրոդուկտի աշխատանքի կամ սպասարկման համար:

2.5.2. Հաճախորդը պարտավոր է ծանոթանալ երրորդ կողմերի հետ կնքվող պայմանագրերին մինչև Համակարգում Թվային քարտի ստեղծումը, ակտիվացումը կամ օգտագործումը:

2.5.3. Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ կողմերի (այդ թվում համակարգի և աջակցող սարքի) սարքավորումների կամ ծրագրային ապահովման և/կամ այլ պրոդուկտների և սպասարկման համար, և չի իրականացնում դրանց տեխնիկական աջակցումը: Երրորդ կողմերի պրոդուկտների օգտագործման և սպասարկման հետ կապված հարցի առաջացման դեպքում, Հաճախորդը պարտավոր է համապատասխան աջակցություն կամ օգնություն ստանալու համար կապ հաստատել անմիջապես երրորդ կողմի հետ: Եթե Հաճախորդի մոտ կառաջանան հարցեր կապված Համակարգի օգտագործման հետ (բացառությամբ Թվային քարտի), նա պետք է դիմի անմիջապես հստակ Համակարգի աջակցության ծառայություն:

2.6. Սպասարկման արժեքը

2.6.1. Սպասարկման սահմանաչափերը և սակագները տեղադրված են Բանկի վեբ-կայքում <https://www.vtb.am/am/online-banking/mir-pay> և կազմում են սույն փաստաթղթի կարևոր բաղկացուցիչ մասը:

2.6.2. Հաճախորդը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերը և այլ տեսակի համաձայնագրերը կարող են նախատեսել այնպիսի հարկեր, սահմանափակումներ և արգելքներ, որոնք հնարավոր է ազդեցություն ունենան Թվային քարտի օգտագործման վրա: Օրինակ՝ տվյալների օգտագործումը կամ անլար կապի օպերատորի կողմից սահմանված տեքստային հաղորդագրության ուղարկման դիմաց վճարը: Հաճախորդը պարտավոր է միանձնյա կարգով պատասխանատվություն կրել նշված վճարումների կատարման և բոլոր սահմանափակումների և արգելքների պահպանման համար:

Գաղտնիություն և անվտանգություն

2.7. Անձնական տեղեկատվություն

2.7.1. Հաճախորդին հայտնի է և նա համաձայն է այն հանգամանքի հետ, որ Բանկն իրավասու է հավաքագրել, մշակել և օգտագործել նրա հետ կապված տեխնիկական և անձնական տեղեկատվությունը, այդ թվում, սակայն չսահմանափակվելով սարքի վերաբերյալ տվյալներով, հետևյալ նպատակով.

2.7.1.1. Բանկի սպասարկման և պրոդուկտների թարմացման և կատարելագործման համար,

2.7.1.2. տրամադրվող սպասարկման անվտանգության մակարդակի բարձրացման համար,

2.7.1.3. զեղծարարության փաստերի կանխարգելման համար:

2.7.2. Հաճախորդին հայտնի է և նա համաձայն է այն հանգամանքի հետ, որ Բանկը չի երաշխավորում կապուղիների, կարճ հաղորդագրությունների, USSD ծառայության և/կամ այլ ուղիներով փոխանցվող տեղեկատվության գաղտնիության պահպանումը:

2.7.3. Հաճախորդը ընդունում է, որ Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքում, եթե երրորդ անձին հայտնի է դարձել հաշվի և/կամ Հաճախորդի Քարտի մասին տեղեկատվությունը (բոլոր Քարտերի մասին, որոնց օգտագործմամբ իրականացվում են հաշիվներով գործառնությունները), երբ նշված տեղեկատվությունը փոխանցվում է Հաճախորդին հեռահար կապուղիներով և օգտագործվում են Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված տվյալները (բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառեր, կոդային բառեր և այլն).

2.7.4. Այլ հարցերը, կապված անձնական տվյալների օգտագործման և փոխանցման հետ, կարգավորվում են Տնօրինության 07.08.2020թ. N237 որոշմամբ հաստատված ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց ծառայությունների տրամադրման պայմանների և կանոնների» համաձայն: [/https://www.vtb.am/img/content/payments-and-accounts/pdf//Prilojenie_OFERTA.pdf/.](https://www.vtb.am/img/content/payments-and-accounts/pdf//Prilojenie_OFERTA.pdf/)

2.7.5. Հաճախորդը համաձայն է, որպեսզի նրա անձնական տվյալները փոխանցվեն սերվիս-պրովայդերին և/կամ փոխկապակցված անձանց:

2.8. Այլ անձանց կողմից հավաքագրվող տեղեկատվությունը

2.8.1. Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգի կամ այլ սերվիս-պրովայդերի կողմից տրամադրվող սպասարկման համար: Հետևաբար, Հաճախորդի կողմից Թվային քարտը կամ Համակարգը օգտագործելիս սերվիս-պրովայդերի կողմից հավաքագրվող ցանկացած տեղեկատվությունը կարգավորվում է սերվիս-պրովայդերի կանոններով և պայմաններով և երրորդ կողմերի հետ պայմանագրերով, բայց ոչ սույն Կանոններով, պայմանագրով:

2.9. Հաճախորդի աջակցող սարքի կորուստը, գողությունը կամ չթույլատրված օգագործումը

2.9.1. Աջակցող սարքի կորստի կամ գողության, Թվային քարտի կամ վավերապայմանների կամ Համակարգի վարկաբեկման և/կամ առանց Հաճախորդի

թույլտվության օգտագործման դեպքում, Հաճախորդը պարտավոր է անմիջապես տեղեկացնել այդ մասին Բանկին՝ զանգահարելով 8787 հեռախոսահամարով:

2.9.2. Վավերացման տվյալների վարկաբեկման կամ նշվածների հետ կապված կասկածների առաջացման դեպքում, Հաճախորդը պարտավոր է անհապաղ փոխել անձնական անվտանգության տվյալները և Վավերացման տվյալները և համոզվել, որ սարքում գրանցված են միայն թույլատրված մատնահետքերը կամ դեմքի պատկերը՝ դրանով խուսափելով Թվային քարտի կամ անձնական տեղեկատվության չթույլատրված օգտագործումից:

2.9.3. Նոր սարք ստանալիս, Հաճախորդը պարտավոր է համոզվել, որ հին սարքում հեռացվել են բոլոր Թվային քարտերը և այլ տեսակի անձնական տեղեկատվությունը:

2.9.4. Համակարգում և/կամ Մոբայլ հավելվածում կարող են օգտագործվել անվտանգության որոշակի գործառույթներ, որոնք պաշտպանում են Թվային քարտը չթույլատրված օգտագործումից: Նշված գործառույթների պատշաճ գործարկման համար պատասխանատվություն է կրում միայն սերվիս-պրովայդերը: Հաճախորդը պարտավորվում է չանջատել նշված գործառույթները և օգտագործել դրանք և անվտանգության համապատասխան միջոցները բոլոր թվային քարտերի պաշտպանության համար:

2.10. Համակարգի գաղտնաբառերի, Վավերացման տվյալների և Թվային քարտերի պաշտպանությունը

2.10.1. Հաճախորդը պարտավոր է ապահովել անձնական անվտանգության տվյալների և Վավերացման տվյալների գաղտնիությունը: Հաճախորդը պարտավոր է պաշտպանել վերջիններս, աջակցող սարքը այնպես, ինչպես պաշտպանում է բանկային Քարտերը և Հաճախորդի անձը հաստատող այլ տվյալները, համարները և գաղտնաբառերը:

2.10.2. Բանկը տրամադրել է խիստ ցուցումներ այն առումով, որպեսզի Հաճախորդը պահպանի Թվային քարտերի անվտանգության տվյալներն առանձին մյուս տվյալներից, և չպահի վճարային Քարտերը աջակցող սարքի հետ միասին:

2.10.3. Հաճախորդի Համակարգում գրանցման մասին կարճ հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստով նամակ ստանալու դեպքում, եթե Հաճախորդը դա չի իրականացրել, կամ եթե գործող Մոբայլ հավելվածում Քարտի քաղվածքում առկա է սխալ կամ անճշտություն, Հաճախորդն անմիջապես պետք է դիմի Բանկ՝ զանգահարելով 8787 հեռախոսահամարով:

3. Գործառույթների կասեցում, չեղարկում և փոփոխություն

3.1. Սերվիս-պրովայդերն իրավունք ունի՝ առանց Բանկի տեղեկացման, արգելափակել, սահմանափակել, կասեցնել կամ դադարեցնել Հաճախորդի կողմից Թվային քարտի օգտագործման հնարավորությունը և/կամ փոփոխել Համակարգի գործառույթները: Հաճախորդը հաստատում է, որ տվյալ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կամ երրորդ կողմի հանդեպ:

3.2. Թվային քարտի ժամանակավոր արգելափակումը կամ կասեցումը վերացնելուց հետո Հաճախորդը կարող է շարունակել օգտվել Համակարգի սպասարկումից՝ համապատասխան ծանուցում ստանալուց հետո:

3.3. Հաճախորդն իրավունք ունի հեռացնել ԹՎային քարտը Համակարգից՝ սարքի վրա համապատասխան ընթացակարգ անցնելուց հետո կամ Բանկի հետ կապվելու միջոցով: Տվյալ հանգամանքներում Հաճախորդը թույլ է տալիս Բանկին շարունակել ցանկացած չկատարված հանձնարարությունների մշակում, կապված ԹՎային քարտի հետ:

4. Վճարային սպասարկման տրամադրման խափանում

4.1. ԹՎային քարտի հասանելիությունը, դրա օգտագործումը և սպասարկումը կախված են Համակարգի և անլար կապի օպերատորի ցանցի սպասարկման ծավալից: Բանկը չի հանդիսանում սպասարկման Համակարգի կամ նշված ցանցի օպերատոր և չի վերահսկում դրանց աշխատանքը: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հանդեպ այն հանգամանքների համար, որոնք կարող են կասեցնել, սահմանափակել կամ այլ կերպ արտացոլվել ցանկացած ԹՎային քարտի աշխատանքի վրա, այդ թվում Համակարգի և անլար կապի, հաղորդակցությունների անհասանելիության, ցանցի խափանման, անլար ծածկույթի սահմանափակման, ցանցում առաջացած անսարքությունների և կապի դադարեցման համար:

4.2. ԹՎային քարտի օգտագործումը նախատեսում է էլեկտրոնային ձևով անձնական տեղեկատվության փոխանցում երրորդ կողմի ցանցի օգնությամբ: Ելնելով նրանից, որ Բանկը չի իրականացնում նման ցանցերի շահագործում կամ վերահսկում, նա չի կարող նման պայմաններում տրամադրել անվտանգության կամ այդպիսի տեղեկատվության գաղտնիության պաշտպանության երաշխիք:

Բանկին Հաճախորդի սարքից կամ Բանկից համացանցի միջոցով ուղարկված անձնական կամ գաղտնի տեղեկատվության հետ կապված, Բանկն իրեն իրավունք վերապահում սահմանափակել այդ տիպի հաղորդակցման կապը, որը սահմանվում է փոխանցման անվտանգության մակարդակի ստանդարտների կամ Բանկի սահմանված անվտանգության այլ ստանդարտների օգտագործմամբ: Բանկը կարող է իրականացնել հաղորդակցությունը կարճ հաղորդագրությունների կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

5. Պատասխանատվության սահմանափակում

5.1. Հաճախորդը տեղեկացված է և համաձայն է այն հանգամանքի հետ, որ Համակարգի և ԹՎային քարտի գործառույթները կարող են թարմացվել ավտոմատ կարգով՝ առանց Հաճախորդին լրացուցիչ հաղորդագրության ուղարկման: Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ որոշում ընդունել ԹՎային քարտերի համար նախատեսված գործառույթությունների տեսակների և/կամ ծավալի ընդարձակման, պակասեցման կամ կասեցման կամ գրանցման ընթացակարգի փոփոխության մասին:

5.2. Բանկին բոլոր Քարտերը վերադարձնելուց և հաշիվը փակելուց հետո, Հաճախորդը չի ազատվում այն գործառույթությունների դիմաց գումարը և դրանց հետ կապված միջնորդավճարները վճարելու պարտավորությունից, ինչպես նաև դրա հետ կապված պատասխանատվությունից, որոնք իրականացվել են Հաճախորդի կողմից Մոբայլ հավելվածը օգտագործելու ժամանակահատվածում:

6. Փոփոխությունների կատարումը սույն Կանոններում

6.1. Բանկն իրավունք ունի վերանայել սույն Կանոնները: Գործող Հաճախորդներին առնչվող սույն Կանոններում փոփոխությունների կատարման մասին Բանկը տեղեկացնում է Հաճախորդին սույն Կանոններով նախատեսված հաղորդակցման ցանկացած կապուղով: Եթե Հաճախորդը համաձայն չէ սույն Կանոններում կատարվող որևէ փոփոխության հետ, նա կարող է հեռացնել Թվային քարտը Համակարգից: Ընդ որում, Հաճախորդը թույլ է տալիս Բանկին շարունակել Թվային քարտի հեռացման պահին չկատարված հանձնարարությունների մշակումը, կապված այդ տիպի Թվային քարտերի հետ:

6.2. Բանկի կողմից նոր կանոնները և պայմանները սահմանելուց հետո, վճարային գործառնությունների իրականացումը Թվային քարտերի միջոցով կհամարվի որպես Հաճախորդի համաձայնություն դրանց օգտագործման համար:

7. Հաղորդակցություն

7.1. Գրանցելով Քարտը Համակարգում, Հաճախորդը համաձայնվում է սույն Կանոնների հետ:

7.2. Հաճախորդը նաև համաձայնվում է ստանալ Բանկի կողմից ուղարկվող բոլոր տեսակի հաղորդագրությունները՝ առնչվող Համակարգի սպասարկման հետ, որոնց ուղարկման համար օգտագործվում են հաղորդակցության հետևյալ կապուղիները.

7.2.1. Էլեկտրոնային փոստը. Հաճախորդը ստանում է տեղեկատվությունը էլեկտրոնային փոստի հասցեին, որը նշված է նրա հաշվի բացման հայտում:

7.2.2. Կարճ հաղորդագրություն. Հաճախորդը ստանում է տեղեկատվությունը կապի օպերատորի բջջային հեռախոսահամարին, որը նշված է նրա հաշվի բացման հայտում:

7.2.3. Push հաղորդագրություններ սարքում,

7.2.4. Համակարգի այլ հնարավորությունների օգտագործմամբ:

8. Այլ դրույթներ

8.1. Սարքավորման աջակցության հետ կապված բոլոր հարցերով Հաճախորդը պետք է դիմի անմիջապես սերվիս-պրովայդերին:

8.2. Համակարգի սպասարկման հետ կապված ցանկացած սահմանափակման կամ սահմանաչափի, ինչպես նաև ծրագրային և սարքավորման ապահովման նվազագույն պահանջների մասին տեղեկատվություն ստանալու համար, Հաճախորդը պետք է դիմի անմիջապես սերվիս-պրովայդերին:

8.3. Համակարգի կամ ինտերնետ ցանցի, սարքավորումների անվտանգության և գաղտնիության հարցերով տեղեկատվություն ստանալու համար, Հաճախորդը պետք է դիմի սերվիս-պրովայդերին կամ անլար կապի ցանցի օպերատորին:

Ծանոթություն. սույն Կանոնների հայերեն և ռուսերեն տարբերակների միջև տարբերությունները հետագայում, նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: